# Ավետիք Իսահակյան

## Հայոց գեղջուկի ծավալուն արտե՛ր

Հայոց գեղջուկի ծավալուն արտե՛ր,
Ավետարանի էջերի նման
Խնկաբո՛ւյր, օծո՛ւն, հավե՛րժ սրբազան,
Թշնամու սրով հասկաբեկ արտե՛ր:

Խոպան մնացիք՝ անտեր ամայի,
Ակոսներիդ մեջ մորթեց մաճկալին,
Մանուկ հոտաղին, անխոնջ ամոլին
Դարերի դժխեմ ոսոխն ամեհի:

Հայոց գեղջուկնե՛ր, եղբայրնե՛ր հոգուս,
Ձեր արյունազանգ արտերի վրա
Դրախտի փառքով պիտի հուրհրա
Մեր ազատության ոսկի արշալույս:

Դուք եք այսօրվան մեր դառն լացը,
Սուրբ նահատակներ աստծո սեղանի,
Դո՛ւք, անմահ սերմեր մեռնող ցորենի,
Դո՛ւք եք վաղորդյան մեր արդար հացը, -

Հայոց գեղջուկնե՛ր, եղբայրնե՛ր հոգուս …

1917
Ժընև